

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ
պարոն ՀՈՎԻԿ ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Աբրահամյան

Ձեզ ենք ներկայացնում Հայաստանի Հանրապետության կառավարության եզրակացությունը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավորներ Գալուստ Սահակյանի, Հերմինե Նադրայանի, Վոլոդյա Բադայանի և Մնացական Մնացականյանի՝ օրենսդրական նախաձեռնության կարգով ներկայացրած «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» և «Հայաստանի Հանրապետության 2013 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի փաթեթի (Պ-388-19.11.2013-ՖՎ-010/0 և Պ-388¹-19.11.2013-ՖՎ-010/0) վերաբերյալ:

Առաջարկում ենք «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին»

Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի 2-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2014 թվականի հունվարի 1-ից»:

Օրենքների նախագծերն անհրաժեշտ է համապատասխանեցնել «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված օրենսդրական տեխնիկայի կանոններին, մասնավորապես՝

1) օրենքների նախագծերի վերնագրերում «փոփոխություններ» բառն անհրաժեշտ է փոխարինել «փոփոխություն» բառով՝ նկատի ունենալով այն հանգամանքը, որ օրենքների նախագծերում միայն մեկ փոփոխություն է նախատեսված, իսկ վերնագրերը «փոփոխություն» բառից հետո անհրաժեշտ է լրացնել «և լրացում» բառով, քանի որ օրենքների նախագծերում նախատեսված է նաև լրացում,

2) օրենքների նախագծերի հոդվածների մասերի համարակալումն անհրաժեշտ է համապատասխանեցնել «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 41-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջներին:

Ելնելով շարադրվածից՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ներկայացված օրենքների նախագծերի փաթեթն ընդունելի կհամարի իր կողմից ներկայացված առաջարկության ընդունման դեպքում:

Միաժամանակ հայտնում ենք, որ, ներկայացված օրենքների նախագծերի փաթեթը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում քննարկելիս, հարակից զեկուցմամբ հանդես կգա Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարար Դավիթ Սարգսյանը:

Կից ներկայացվում են օրենքների նախագծերի կարգավորման ազդեցության գնահատման եզրակացությունները:

Հարգանքով՝

ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

**ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ**

**«Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի
Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» և «Հայաստանի
Հանրապետության 2013 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրա-
պետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրա-
պետության օրենքների նախագծերի**

«Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի
Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» և «Հայաստանի
Հանրապետության 2013 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության
օրենքում փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների
նախագծերի ընդունումը առողջապահության բնագավառի վրա ազդեցություն չի ունենա:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

**«Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստա-
նի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» և «Հա-
յաստանի Հանրապետության 2013 թվականի պետական բյուջեի մասին» Հա-
յաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին»
ՀՀ օրենքների նախագծերի վերաբերյալ սոցիալական պաշտպանության
ոլորտում կարգավորման ազդեցության գնահատման**

«Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հան-
րապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» և «Հայաստանի Հան-
րապետության 2013 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության
օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերի (այսուհետ՝
նախագծեր) սոցիալական պաշտպանության ոլորտում կարգավորման ազդեցության
գնահատումը կատարվել է «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 27.1 հոդվածի և ՀՀ
Կառավարության 2010 թվականի հունվարի 14-ի թիվ 18-Ն որոշման համաձայն:

Նախագծերի սոցիալական պաշտպանության ոլորտում կարգավորման ազդեցության
գնահատումը կատարվել է սոցիալական պաշտպանության ոլորտի և դրա առանձին
ենթաոլորտների իրավիճակի բնութագրիչների և դրանց ինդիկատորների հիման վրա:

Նախագծերը՝

ա) ռազմավարական կարգավորման ազդեցության տեսանկյունից ունեն **չեզոք
ազդեցություն.**

բ) շահառուների վրա կարգավորման ազդեցության տեսանկյունից ունեն **չեզոք
ազդեցություն:**

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» և «Հայաստանի Հանրապետության 2013 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերի տնտեսական, այդ թվում՝ փոքր և միջին ձեռնարկատիրության բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման

«Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» և «Հայաստանի Հանրապետության 2013 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերի (այսուհետ՝ Նախագիծ) գործարար և ներդրումային միջավայրի վրա կարգավորման ազդեցության գնահատման նպատակով իրականացվել են նախնական դիտարկումներ:

Գնահատման նախնական փուլում պարզ է դարձել, որ *Նախագիծը վերաբերում է «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» և «2013 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքների միջև առկա հակասությունների վերացմանը* և Նախագծի ընդունման դեպքում, դրա կիրարկման արդյունքում գործարար և ներդրումային միջավայրի վրա ազդեցություն *չի նախատեսվում*:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» և «Հայաստանի Հանրապետության 2013 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի մրցակցության բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման

«Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» և «Հայաստանի Հանրապետության 2013 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի (այսուհետ՝ Նախագծեր) ընդունմամբ նախատեսվում է վերացնել գործող իրավական ակտերում առկա հակասությունները, ինչպես նաև ավելացնել ՀՀ պետական բյուջեի հարկային եկամուտները:

Նախագծերի մրցակցության բնագավառում ազդեցության գնահատման գործընթացի նախնական փուլում պարզվել է, որ Նախագծերով կարգավորվող շրջանակները առնչվում են գովազդային ծառայությունների շուկաների հետ:

Հիմք ընդունելով նախնական փուլի արդյունքները՝ կարգավորման ազդեցության գնահատման աշխատանքները դադարեցվել են՝ արժանագրելով Նախագծերի ընդունմամբ մրցակցության միջավայրի վրա *ազդեցություն չհայտնաբերվելու* եզրակացություն:

**ՀԱԿԱԿՈՌՈՒՊՏԻՈՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ**

**«Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի
Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» և «Հայաստանի
Հանրապետության 2013 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հան-
րապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի
Հանրապետության օրենքների նախագծերի վերաբերյալ**

«Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» և «Հայաստանի Հանրապետության 2013 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերն իրենց մեջ Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի հոկտեմբերի 22-ի «Նորմատիվ իրավական ակտերի նախագծերի հակակոռուպցիոն բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման իրականացման կարգը հաստատելու մասին» թիվ 1205-Ն որոշմամբ հաստատված Կարգի 9-րդ կետով նախատեսված որևէ կոռուպցիոն գործոն չեն պարունակում:

ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

**«Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին»
Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու
մասին» և «Հայաստանի Հանրապետության 2013 թվականի պետական
բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ
կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի
բնապահպանության բնագավառում կարգավորման**

1. «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» և «Հայաստանի Հանրապետության 2013 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի (այսուհետ՝ օրենքներ) ընդունման արդյունքում մթնոլորտի, հողի, ջրային ռեսուրսների, ընդերքի, բուսական և կենդանական աշխարհի, հատուկ պահպանվող տարածքների վրա բացասական հետևանքներ չեն առաջանա:

2. Օրենքների նախագծերի չընդունման դեպքում շրջակա միջավայրի օբյեկտների վրա բացասական հետևանքներ չեն առաջանա:

3. Օրենքների նախագծերը բնապահպանության ոլորտին չեն առնչվում, այդ ոլորտը կանոնակարգող իրավական ակտերով ամրագրված սկզբունքներին և պահանջներին չեն հակասում:

Օրենքների կիրարկման արդյունքում բնապահպանության բնագավառում կանխատեսվող հետևանքների գնահատման և վարվող քաղաքականության համեմատական վիճակագրական վերլուծություններ կատարելու անհրաժեշտությունը բացակայում է:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» և «Հայաստանի Հանրապետության 2013 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի բյուջետային բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման վերաբերյալ

«Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծով առաջարկվում է ռադիոհաճախականության օգտագործման վճար հասկացությունը սահմանել որպես օգտագործման պարտադիր վճար և պետական բյուջեի այլ եկամուտների դաշտից տեղափոխել հարկային եկամուտների դաշտ:

Ելնելով վերոշարադրյալից՝ գտնում ենք, որ վերոնշյալ նախագծերի ընդունումը ՀՀ պետական բյուջեի եկամուտների վրա կունենա չեզոք ազդեցություն, սակայն կհանգեցնի ՀՀ պետական բյուջեի հարկային եկամուտների ավելացմանը (2013թ. շուրջ 5.3 մլրդ դրամ, 2014թ.՝ 5.5 մլրդ դրամ), ի հաշիվ նույն գումարների չափով այլ եկամուտների նվազման:

Հայտնում ենք նաև, որ վերոնշյալ նախագծերի թե ընդունումը և թե չընդունումը ՀՀ պետական բյուջեի ելքերի, ինչպես նաև համայնքների բյուջեների մուտքերի և ելքերի փոփոխմանը չի հանգեցնում:

Պ-388-19.11.2013-ՖՎ-010/0

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ**

**«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հոդված 1. «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության 1997 թվականի հունիսի 24-ի ՀՕ-137 օրենքում՝

1) 17-րդ հոդվածի 2-րդ մասի «թ4» կետը «վճարը» բառից հետո լրացնել «եւ օգտագործման պարտադիր վճարը» բառերը.

2) 5-րդ մասի «ժ» կետը ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող տասներորդ օրը եւ տարածվում է 2013 թվականի հունվարի 1-ից հետո ծագած հարաբերությունների վրա:

ՆԱԽԱԳԻԾ

Պ-388՝-19.11.2013-ՖՎ-010/0

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ**

**«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՄԱՍԻՆ»
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ
ՄԱՍԻՆ**

Հոդված 1. «Հայաստանի Հանրապետության 2013 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության 2012 թվականի դեկտեմբերի 5-ի ՀՕ-222-Ն օրենքում՝

1) 10-րդ հոդվածի 8-րդ կետում «օգտագործման վճարների» բառերը փոխարինել «օգտագործման պարտադիր վճարների» բառերով:

2) օրենքի հավելված թիվ 7-ի աղյուսակ 2-ի վերնագրում «օգտագործման» բառից հետո լրացնել «պարտադիր» բառը:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող տասներորդ օրը եւ տարածվում է 2013 թվականի հունվարի 1-ից հետո ծագած հարաբերությունների վրա:

ՏԵՂԵԿԱՆՔ

**« Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին »
եւ «Հայաստանի Հանրապետության 2013 թվականի պետական բյուջեի մասին
» Հայաստանի Հանրապետության օրենքներում փոփոխություններ կատարելու մասին ՀՀ
օրենքների նախագծերի ընդունման հիմնավորման**

Նախագծերի ընդունումը հիմնավորում է գործող իրավական ակտերում առկա հակասությունները վերացնելու, ինչպես նաեւ ՀՀ պետական բյուջեի հարկային եկամուտներն ավելացնելու նպատակով:

Համաձայն «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» ՀՀ օրենքի 17.1 հոդվածի 6-րդ մասին՝ «Ռադիոհաճախականության օգտագործման պարտադիր վճարը սահմանվում է տարվա համար եւ ենթակա է վճարման յուրաքանչյուր եռամսյակի համար հավասարաչափ մինչեւ տվյալ եռամսյակին հաջորդող ամսվա 25-ը ներառյալ»: Սակայն « Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին » ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի 5-րդ մասի «Ժ» կետով սահմանված է, ինչպես նաեւ « 2013 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 8-րդ կետով եւ նույն օրենքի հավելված թիվ 7-ի աղյուսակ 2-ի վերնագրում նշված է «ռադիոհաճախականության օգտագործման վճար » հասկացությունը, որը համարվում է այլ հարկային եկամուտ:

Ելնելով վերոգրյալից՝ անհրաժեշտություն է առաջացել օրենսդրորեն վերացնելու իրավական ակտերի միջեւ առկա հակասությունը՝ « Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» եւ « Հայաստանի Հանրապետության 2013 թվականի պետական բյուջեի մասին » ՀՀ օրենքներում համապատասխան փոփոխություններ կատարելու միջոցով: